

**«ԱԼՄԱՍ» ԲԲԸ
2009Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

1) Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ավաստային գործիքների արտադրությունն է: Դրանցից են քար կտրող, հղկող, ապակի կտրող գործիքները:

Ընկերության արտադրանքի պահանջարկի պակաս է նկատվել 2009 թ. ընթացքում: Ընկերությանն անհասկանալի պատճառներով 2009 թ. նոյեմբեր ամսից սկսած արտասահմանից պատվերներ հիմնականում չեն եղել: Չնայած նշված գործոններին ընկերությունն իր հաստատուն ծախսերը պահպանել է, ինչի արդյունքում կրել է վնաս:

Մանրաձախ գներով հաշվարկի դեպքում 2009 թ. ընթացքում արտադրվել է 84,375,000 դրամի արտադրանք: Արտադրության հումքը (մետաղ, օլոֆ, պղինձ և այլն) Ընկերությունը ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից և Չինաստանից: Հումքի ձեռքբերման գները և արտադրանքի վաճառքի գները 2009 թ. ընթացքում հիմնականում կայուն են եղել: Արտադրանքի իրացումը հիմնականում լինում է տեղական շուկայում: 2009 թ.-ի ընթացքում իրացվել է 98,148,000 դրամի արտադրանք, որից 15,692,000 դրամի արտադրանք արտահանվել է: Ընկերությունում առկա արտադրանքի մնացորդը 01.01.2009 թ. և 01.01.2010 թ. դրությամբ բերված է աղյուսակում.

Աղյուսակ 1

«Այնաստ» ԲԲԸ-ում առկա արտադրանքի մնացորդը (դրամ)

	Պահեստում	Խանութում
01.01.2009 թ.	367,763,000	11,215,000
01.01.2010 թ.	379,184,000	-

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2009 թ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-83823
Իրացման ծախսեր	-2885
Վարչական ծախսեր	-58170
Գործառնական շահույթ	-42268
Այլ ոչ գործառնական շահույթ	-50973
2009թ. գուտ շահույթ	-94306
Հիմնական միջոցները 01.01.2010թ.	939391
Կանոնադրական կապիտալը	418217
Դեբիտորական պարտք	24329
Կրեդիտորական պարտք	1122647

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	01.01.2010 թ.
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-225.5
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-15.8 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-5.6 %
Չուտ շահույթի մարժա (NPM)	-96.1 %
Կապիտալի համարժեքության գործակից	32.9 %
Ֆինանսական կախվածության գործակից	203.6 %
Բացարձակ իրացվելության գործակից	0.0
Ընթացիկ իրացվելության գործակից	1.8
Ընդհանուր իրացվելության գործակից	19.4
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	5.2
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	70.6
Պաշարների շրջանառելիության գործակից	0.1
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	2909.1
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.1
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	4758.5

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, անորոշությունը, պայմանավորված է արտարժույթի փոխարժեքների տատանումների հետ: Հաշվետու տարվա ընթացքում կուրսերի տարբերություններով պայմանավորված ընկերությունը կրել է մոտ 50 մլն. դրամի վնաս:

2) Այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության կարծիքով կարևոր դեպքերը բացակայում են:

Վերջին երեք տարիների ընթացքում Ընկերությունը շահութաբաժիններ չի վճարել:

3) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել: Ընկերության ղեկավարությունը լավատես է և վստահ, որ 2010 թ.-ն ընկերության համար լինելու է հաջող: